

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵՂ

ՍՐ. ԳՐԻԳՐ ԼՈՒՍԱՌՈՒԻՉ ԱՌԱՋՆՈՐՂԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ




GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL ՄԱՅՐ ՏԱՆՏՐ

ԿԻՐԱԿԻ 17 Փետրուար 2019

98

DIMANCHE, 17 Février 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

Ե. Կիրակի զկնի Ծննդեան

5^{ème} Dimanche après Noël

Աստուածաշունչի Ընթերցումներ

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ
ՏԻՄՈԹԵՈՍԻ ԳՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍԱԿԵՆ
3.1-12**

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԵՆ
ԸՍՏ ՅՈԿՅԱՆՆԵՍԻ
6.22-32**

**Les lectures de la Bible d'aujourd'hui :
2 Timothée: 3.1-12**

Jean 6.22-32

**Պատարագիչ՝ Յոզեֆ Յովիլ
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Célébrant: Prêtre Paroissial
RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

**Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին
Office Matines à 9 :30**

**Ս. Պատարագ ժամը 10:30-ին
La Sainte Messe à 10:30**

**Յոգեհանգստեան Պաշտօն կեսօրին
Office de Requieme à Midi**

**ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՐ ՆՃԱՆԱԴՐԵԱԼՆԵՐՈՒ
ՕՐՅՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian
Organists: Mr. Karen Manucharyan
Mrs. Hourı Bedrossian**

ԿԻՐԱԿՆՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՄՈԹԷՈՍԻ ԳՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍՄԱԿԷՆ 3.1-12

Գիտցիր թե վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան. Վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայիոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, Անգութ, անհաշտ, բանասարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, Մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր. Որոնք աստուածպաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են եւ դուն անոնցմէ մէկդի՛ կեցիր: Վասն զի ասոնցմէ ոմանք տուներէն ներս կը մտնեն ու գերի կ'ընեն մեղքով բեռնաւորուած տկարամիտ կիները՝ զանազան ցանկութիւններէ վարուած, Որ միշտ կը սորվին, բայց բնաւ չեն կրնար ճշմարտութիւնը ճանչնալ: Հապա ինչպէս Յանէսն ու Յամբէր հակառակ կեցան Մովսէսին, նոյնպէս ասոնք ալ ճշմարտութեանը հակառակ կը կենան. մտքով ապականած մարդիկ, որոնք հաւատքի մէջ անպիտաններ են: Բայց աւելի յառաջ պիտի չերթան, վասն զի ասոնց անմտութիւնը ամենուն յայտնի պիտի ըլլայ, ինչպէս երկուքինը եղաւ:

Իսկ դուն ծանօթացար իմ վարդապետութեանս, վարմունքիս, դիտաւորութեանս, հաւատքիս, երկայնմտութեանրս, սիրոյս, համբերութեանս, Հալածանքներուս, չարչարանքներուս, որոնք ինձի պատահեցան Անտիոքի եւ Իկոնեոնի ու Լիւստրայի մէջ, զիտես թէ ի՛նչպէս հալածանքներու համբերեցի: Եւ Տէրը ազատեց զիս այս ամենէն: Եւ ամէն անոնք որ կ'ուզեն աստուածպաշտութեամբ ապրիլ՝ Քրիստոս Յիսուսով՝ հալածանք պիտի կրեն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

6.22-32

Հետեւեալ օրը ժողովուրդը որ ծովուն անդիի կողմն էր եւ տեսեր էր որ ուրիշ նաւակ չկար այն մէկէն գատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտեր էին, իսկ Յիսուս իր աշակերտներուն հետ նաւակը մտած չէր եւ միայն անոր աշակերտները գացեր էին. (Բայց Տիբերիայէն ուրիշ նաւակներ եկան այն տեղին մօտ՝ ուր Տերոջը գոհանալովը հացը կերեր էին.) Այն ատեն ժողովուրդը տեսնելով թէ ո՛չ Յիսուսը հոն է, ո՛չ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւերը մտան ու գացին Կափառնայում Յիսուսը փնտռելու:

Ու երբ զանիկա ծովուն անդիի կողմը գտան, ըսին անոր. «Ռա՛բբի, ե՞րբ եկար դուն հոս»: Յիսուս պատասխան տուաւ անոնց եւ ըսաւ. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. 'Դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ անոր համար որ հրաշքներ տեսաք, հապա անոր համար որ հացերէն կերաք ու կշտացաք': Գացե՛ք, գործեցե՛ք, ո՛չ թէ կորստական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար, որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ, որ Որդին մարդոյ ձեզի պիտի տայ, վասն զի Հայրն Աստուած զանիկա կնքեց»: Այն ատեն ըսին անոր. «Ի՞նչ ընենք որպէս զի Աստուծոյ գործերը կատարենք»: Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց. «Այս է Աստուծոյ գործը, որ անոր դրկածին հաւատաք»: Ըսին անոր. «Բայց դուն ի՞նչ նշան կ'ընես, որ տեսնենք ու քեզի հաւատանք. ի՞նչ կը գործես: Մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան. ինչպէս գրուած է. 'Երկնքէն հաց տուաւ անոնց որպէսզի ուտեն»»: Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ 'Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր հացը՛:

2 Timothée 3.1-12

Or sache ceci, qu'aux derniers jours il surviendra des temps fâcheux. Car les hommes seront idolâtres d'eux-mêmes, avares, vains, orgueilleux, blasphémateurs, désobéissants à leurs pères et à leurs mères, ingrats, profanes; Sans affection naturelle, sans fidélité, calomniateurs, incontinents, cruels, haïssant les gens de bien; Traîtres, téméraires, enflés [d'orgueil], amateurs des voluptés, plutôt que de Dieu. Ayant l'apparence de la piété, mais en ayant renié la force : éloigne-toi donc de telles gens. Or d'entre ceux-ci sont ceux qui se glissent dans les maisons, et qui tiennent captives les femmes chargées de péchés, et agitées de diverses convoitises; Qui apprennent toujours, mais qui ne peuvent jamais parvenir à la pleine connaissance de la vérité. Et comme Jannès et Jambres ont résisté à Moïse, ceux-ci de même résistent à la vérité; [étant des] gens qui ont l'esprit corrompu, et qui sont réprouvés quant à la foi. Mais ils n'avanceront pas plus avant : car leur folie sera manifestée à tous, comme le fut celle de ceux-là.

Mais pour toi, tu as pleinement compris ma doctrine, ma conduite, mon intention, ma foi, ma douceur, ma charité, ma patience. Et tu [sais] les persécutions et les afflictions qui me sont arrivées à Antioche, à Iconie, et à Lystre, quelles persécutions, [dis-je], j'ai soutenues, et [comment] le Seigneur m'a délivré e toutes. Or tous ceux aussi qui veulent vivre selon la piété en Jésus-Christ, souffriront persécution.

Jean 6.22-32

Le lendemain les troupes qui étaient demeurées de l'autre côté de la mer, voyant qu'il n'y avait point là d'autre nacelle que celle-là seule dans laquelle ses Disciples étaient entrés, et que Jésus n'était point entré avec ses Disciples dans la nacelle, mais que ses Disciples s'en étaient allés seuls; Et d'autres nacelles étant venues de Tibériade près du lieu où ils avaient mangé le pain, après que le Seigneur eut rendu grâces; Ces troupes donc qui voyaient que Jésus n'était

point là, ni ses Disciples, montèrent aussi dans ces nacelles, et vinrent à Capernaüm, cherchant Jésus. Et l'ayant trouvé au delà de la mer, ils lui dirent : Maître, quand es-tu arrivé ici?

Jésus leur répondit, et leur dit : en vérité, en vérité je vous dis : vous me cherchez, non parce que vous avez vu des miracles, mais parce que vous avez mangé des pains, et que vous avez été rassasiés. Travaillez, non point après la viande qui périt, mais après celle qui est permanente jusque dans la vie éternelle, laquelle le Fils de l'homme vous donnera; car le Père, [savoir] Dieu, l'a approuvé de son cachet. Ils lui dirent donc : que ferons-nous pour faire les œuvres de Dieu? Jésus répondit, et leur dit : c'est ici l'œuvre de Dieu, que vous croyiez en celui qu'il a envoyé. Alors ils lui dirent : quel miracle fais-tu donc, afin que nous le voyions, et que nous te croyions? quelle œuvre fais-tu? Nos pères ont mangé la manne au désert; selon ce qui est écrit : il leur a donné à manger le pain du ciel. Mais Jésus leur dit : en vérité, en vérité je vous dis : Moïse ne vous a pas donné le pain du ciel; mais mon Père vous donne le vrai pain du ciel.

ՇԱԲԹՈՒՄՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

«Եթէ բոլորը լքեն զիս, ապա Դուն, Տէ՛ր, չես թողուր զիս, եւ եթէ ոչ ոք չգայ զիս փրկելու համար, ապա այդ բոլորովին զիս չ'անհանգստացնէր, ոչ ալ կը զարմացնէ, բայց կարելորդ այն է, որ Դուն, Տէ՛ր, չես լքեր զիս, որովհետեւ փրկութիւնը Քեզմով է»:

Շենուդա Գ հայրապետ

«Եթէ կ'ուզես աղքատ ըլլալ՝ հարստացիր: Եթէ կ'ուզես հարուստ ըլլալ՝ այդ պարագային բաժնէ...»:

Հայր Գաբրիէլ Աթոսացի

ԱՌԱՋԱԻՈՐԱՑ ՊԱՀՔ

Սուրբ Սարգիս Զորավարի տօնին նախորդող երկուշաբթի օրէն կը սկսի Առաջաւորաց պահքը՝ որ յատուկ է միայն Հայ Առաքելական Եկեղեցիին, եւ կը տեւէ հինգ օր:

Այս տարի Սուրբ Սարգիս Զորավարի տօնը կը հանդիպի 16 Փետրուարին եւ Առաջաւորաց Պահքն ալ կը սկսի 11 Փետրուարին:



ԽՈՐ ՎԻՐԱՊ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Խոր Վիրապէն ելլելէն յետոյ, հրաշքով դարձի եկած Տրդատ թագաւորին, հայոց մեծամեծներուն եւ ամբողջ ժողովուրդին, նախքան մկրտելը, 65 օր շարունակ կը քարոզէր Քրիստոսի վարդապետութիւնը՝ որմէ յետոյ պատուիրեց 5 օր ապաշխարել պահեցողութեամբ:

Այդ հինգ օրերուն, ժողովուրդը իր թագաւորին հետ ո՛չ միայն ինքզինք զրկած էր կերակուրներէն, այլ հոգեւոր խիստ պահեցողութեամբ մեծապէս կը զոջար իր նախկին հեթանոսական, ամբարոյ կեանքի բոլոր մեղքերուն համար, ամէն տեսակ օրինազանցութիւններուն համար, մանաւանդ հայոց թագաւորը Տրդատ եւ մեծամեծները՝ որոնք Քրիստոսի հաւատքին պատճառով Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը բազմաթիւ տանջանքներու, չարչարանքներու ենթարկելէ յետոյ օձերով լեցուն եւ մութ, խաւար խոր փոսը՝ վիրապը թողած էին, իսկ Հռիփսիմեան կոյսերը՝ չարչարելով սպաննած:

Ահաւասիկ, այս պայմաններուն տակ՝ հաստատուեցաւ Առաջաւորաց Պահքը կամ Առաջաւորքը՝ Հայ Առաքելական Եկեղեցոյ առաջին պահքը՝ որով եւ կը բացատրուի իր անունը «Առաջաւորաց»:

Արդարեւ, պէտք է յատկապէս նշել, թէ հին ժամանակներուն «պահք» ըսելով կը հասկցուէր մեր այսօրուան ծոմը՝ այսինքն ընդհանրապէս ոչ մէկ բան կուտէին, ջուրի սակաւ գործածութեամբ միայն, կամ կուտէին միայն քիչ բանջարեղէն: Բայց աւելի ուշ ժամանակներուն բանջարեղէնին աւելցուեցան բուսական ծագում ունեցող նաեւ՝ ուրիշ կերակուրներ եւ մեղրը, եւ որպէս տարբերակ մտաւ պահքի եւ ծոմի միջեւ՝ ծոմը դարձնելով պահքի աւելի խիստ տեսակ մը:

Ուստի, այսօր Առաջաւորաց Պահքը պահելու կերպը՝ ծոմ թէ սովորական պահք, թողուած է հաւատացեալի կամքին:

Առաջաւորաց Պահքը կը հանդիպի Մեծ Պահքէն 3 եւ Սուրբ Զատիկի տօնէն 10 շաբաթ առաջուան: Առաջաւորաց Պահքը կը տեւէ 5 օր՝ երկուշաբթի օրէն մինչեւ ուրբաթ օր՝ ներառեալ, իսկ շաբաթ օրը Հայ Առաքելական Եկեղեցին կը նշէ Սուրբ Սարգիս Զօրավարի տօնը:

Հոս պէտք է յատկապէս նշել, որ Սուրբ Սարգիս Զօրավարի տօնին պատճառով Առաջաւորաց Պահքը յաճախ կը կոչուի «Սուրբ Սարգիս Զօրավարի պահք»: Սակայն նա-

խընտրելի է գործածել պահքին բուն՝ իսկական անունը, քանի որ Առաջաւորաց Պահքը Սուրբ Սարգիսի տօնին հետ ոչ մէկ կապ ունի: Ուստի Առաջաւորաց Պահքին հաստատման պատճառը բոլորովին տարբեր է, ինչպէս յիշուեցաւ նախապէս:

Իսկ ինչո՞ւ 5 օր պահք կը պահուի:

Հայ Եկեղեցոյ Հայրերը մի քանի բացատրութիւն կու տան այս հարցումին:

Ա) Ինչպէս արդէն ըսուեցաւ, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի կարգադրութեամբ ամբողջ արքունիքը եւ հայ ժողովուրդը ապաշխարութեան մէջ եղան ամբողջ 5 օր:

Բ) Քանի որ մարդը հինգ զգայարան ունի՝ տեսանելիք՝ աչքերը, լսելիք՝ ականջները, հոտոտելիք՝ քիթը, ճաշակելիք՝ բերանը եւ շօշափելիք՝ ձեռքերը եւ ոտքերը, որոնցմով կը մեղանչէ. ուստի այս պահքի հինգ օրերուն ընթացքին պիտի զոջայ այս հինգ զգայարաններով կատարած իր մեղքերուն համար, պիտի խոստովանի զանոնք Աստուծոյ եւ պիտի ջանայ այլեւս չկատարել զանոնք:

Գ) Ինչպէս յայտնի է, Աստուած աշխարհը եւ հոն եղած ամէն ինչ ստեղծեց 6 օրուան մէջ: Վեցերորդ օրը ստեղծեց մարդը եւ, թէեւ մինչ այդ ստեղծած էր ամէն տեսակի կենդանիները, տուաւ անոնց աճելու եւ բազմանալու հրաման, սակայն ուտելու հրաման թերեւս չէր տուած: Այդ հրամանը (ԾՆՆԴ. Ա 29-30) մարդուն եւ ամբողջ կենդանական աշխարհին տուաւ միայն վեցերորդ օրը, այսինքն՝ 5 օրէն յետոյ:

Ուրեմն աշխարհի ստեղծման առաջին 5 օրը, կարելի է ըսել, պահքի կամ ծոմի օրեր էին, քանի որ ո՛չ ոք ո՛չ մէկ բան կուտէր:

Դ) Ըստ Եկեղեցիի՝ այս պահքը սահմանուած էր նաեւ Մովսէսէն առաջ եղած նահապետներու կողմէ: Ըստ աւանդութեան՝ դրախտէն արտաքսուելէն յետոյ Ադամը 5 օր անօթի մնաց: Ադամէն սորվելով՝ իր որդիներն ալ սկսան հնգօրեայ պահք պահել, օրինակ, Աբելը՝ զոհ մատուցանել

առաջ, կամ Մէթը, երբ իր հայր Ադամը մեռաւ: Ենովքն ալ 5 օր պահք կը պահէր ամէն ամսամուտին, իսկ Նոյը այս պահքը պահած է տապան մտնելէն առաջ եւ այնտեղէն էլ-լէլէն յետոյ: Աբրահամը, Յակոբը եւ Յովսէփը նաեւ հնգօրեայ պահք են պահած: Եւ ըստ Հայ Եկեղեցոյ Հայրերու բացատրութեան՝ Առաջաւորաց Պահքի՝ նաեւ նահապետներէն սահմանուած ըլլալու պատճառով է, որ այս պահքի առաջին չորս օրերու ընթացքին՝ երկուշաբթիէն մինչեւ հինգշաբթի, Աստուածաշունչէն հատուածներ՝ ընթերցուածներ չեն կարդացուիր եկեղեցիին մէջ, քանի որ այս պահքը հաստատուեցաւ այն ժամանակ, երբ դէռ չէին գրուած ո՛չ Հին



Կտակարանի, ոչ ալ առաւել եւս Նոր Կտակարանի գիրքերը:

Առաջաւորաց Պահքի վերջին՝ Ուրբաթ օրը, Յովնան մարգարէի (Ն. Ք. 8-րդ դար) յիշատակի օրն է, եւ Եկեղեցին կը կարդայ անոր գիրքը, ուր նոյնպէս կը խօսուի պահքի եւ ապաշխարութեան մասին. «Թագաւորի եւ անոր մեծամեծերու կողմէ Նինուէի մէջ յայտարարուեցաւ, եւ ազդարարուեցաւ, թէ մարդ եւ անասուն, հօտ եւ արջառ թող ոչինչ չուտեն, չճարակեն եւ ջուր չխմեն: Եւ մարդ եւ անասուն քուրձ հագած, ի սրտէ աղօթեցին Աստուծոյ, բոլորը ետ կանգնեցին իրենց չար ճանապարհներէն եւ անօրէնութիւններէն՝ որ իրենց ձեռքով կը կատարուէին...» (ՅՈՎՆ. Գ 7-8):

Աղբիւր՝

ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ քարոզներէն

ՏԵԱՌԴԱՌԱԶ

«Եւ հուրը բորբոքելով՝ Անոր սիրոյ հուրը կը խնդրենք...»:
(Սուրբ Գրիգոր Տաթևացի)

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ անշարժ եւ տնօրինական տօներէն է Յիսուս մանուկի տաճար ընծայման այս տօնը, որ յայտնի «Քառասնօրեայ գալուստն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի տաճարն» անունով: Եւ կը նշուի Սուրբ Ծնունդէն 40 օր ետք, Փետրուար 14-ին:

Այս տօնը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աստուածայայտ-



նութիւնը ակներեւ դարձնող եւ բացայայտող իրադարձութիւններէն է:

Համաձայն հրեաներու օրէնքին, զաւակ մը իր ծնունդէն քառասուն օր ետք, Աստուծոյ պէտք էր ընծայուէր: Արդ,

ըստ այս օրէնքին Սուրբ Մարիամ Աստուածածինը, Սուրբ Ծնունդին քառասուն օր ետք, առնելով Յիսուս մանուկը գրնաց տաճար, եւ այնտեղ հանդիպեցաւ Միմէոն ծերունիին: Վերջինս յայտնապէս զգալով Աստուծոյ ներկայութիւնը աղաղակեց. «Այժմ, ո՛վ Տէր, համաձայն Քու խոստումիդ՝ ձգե՛ որ ծառադ խաղաղութեամբ հանգչի. որովհետեւ աչքերովս տեսայ Փրկիչը...» (Ղուկաս 2:29-30):

Տեառնըդառաջի տօնի նախօրեակին, Փետրուար տասըներեքին, կը կատարուի երեկոյեան ժամերգութիւն, նախատօնակ եւ յատկապէս կը կատարուի նորապսակներու օրհնութեան կարգ, տնօրինութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին: Յաւարտ եկեղեցական արարողութեան, եկեղեցիներու շրջափակին մէջ, Սուրբ Խորանէն բերուած Լոյս-Քրիստոսը խորհրդանշող մոմով կը բոցավառուի աւանդական խարոյկը, որ կը լուսաւորէ ու կը



ջերմացնէ ներկայ ժողովուրդը, անոր կոյուղեկի նաեւ ազգային ու հայրենասիրական երգն ու պարը, վերածուելով Տեառնըդառաջի ժողովրդային հանդէսի:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ



Ս. Սարգիս զօրավարը ամենասիրուած սուրբերէն է: Իր որդիին՝ Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկներու հետ ան նահատակուած է յանուն Քրիստոնէական հաւատքի: Հաւատացեալները նահատակներու մարմինները կ'ամփոփեն Յամիան քաղաքին մէջ:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետ անոր մատուցները կը բերէ Կարբի (Աշտարակի շրջան) տեղւոյն վրայ կառուցելով երանելիի անունը կրող եկեղեցի:

Ս. Սարգիս զօրավարը երիտասարդներու արագահաս եւ խնդրակատար բարեխօսն է: Անոր միջնորդութեամբ հրաշքներ տեղի կ'ունենան: Այդ օրը հայ երիտասարդը կը դիմէ սուրբին, որ իր աղօթքը հասցնէ առ Աստուած:

Ս. Սարգիսի տօնին նախորդող գիշերը երիտասարդները աղի բլիթ կ'ուտեն եւ կ'աղօթեն, որուն հետ կը կապեն իրենց փեսացուին կամ հարսնցուին երազայայտութիւնը:

Այդ օրուան յիշատակելի սովորութիւններէն է փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամին եւ սպասել Ս. Սարգիս զօրավարի ձիուն պայտի հետքին: Ըստ աւանդութեան՝ Ս. Սարգիս պէտք է հրեշտակներու ուղեկցութեամբ անցնի, եւ որուն մատուցարանին մէջ դըրած ալիւրին կամ փոխինդին մէջ ձգէ մաքրութիւն, անաղարտութիւն խորհրդանշող իր սպիտակ ձիու պայտին հետքը, այդ տարի կ'իրականանայ տուեալ հաւատացեալին երազանքը:

Երիտասարդները տօնին առթիւ իրարու բացիկներ եւ քաղցրաւենիք կը նուիրեն: Տօնին օրը Ս. Սարգիս Զօրավարի անունը կրող եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Սուրբ Պատարագ, որմէ ետք, կը կատարուի երիտասարդներու օրհնութեան կարգ:



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՈԹՔԸ

ԱՂՈԹՔ ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Ով բարերար եւ բազումողորմ Աստուած, Քու առջեւ իյնալով կ'աղաչենք մեր բոլոր սրտով, եւ զթուփին կը խնդրենք քեզմէ, ինչպէս որ խոստացար եւ ըսիր թէ՛ «Ամէն ինչ որ խնդրէք չօրմէ հաւատքով՝ Որդիին անունով, պիտի տրուի ձեզի»:

Ով Տէր, նոյն խոստումդ շնորհէ հիմա քեզի հաւատացողներուս, եւ մեր խնդրուածքն ի բարին կատարէ, քանզի Քեզի ապաւինած ենք: Եւ Քու առատ ողորմութեամբ մխիթարէ մեզ մեր կեանքին մէջ, եւ մեզ առաջնորդելով հասցուր երկրնքի անճառ արքայութեանդ, փառաբանելու եւ պատուելու համար ամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

SUPPLICATION POUR L'EXAUCEMENT DES PRIÈRES

Nous approchant de Toi, Dieu bienfaiteur et très miséricordieux, nous te supplions de tout promis à tes serviteurs selon ta parole : « Tout ce que, dans la foi, vous demanderez au Père par le nom du Fils, vous sera accordé ». Maintenant aussi exauce-nous qui croyons en toi et accueille nos prières pour le bien, car nous avons confiance en Toi. Par ton abondante miséricorde, réconforte-nous en cette vie et fais-nous parvenir, sous ta conduite, à Ton Royaume céleste indicible, pour que nous Te glorefiions et toujours et pour l'éternité de l'éternité. Amen.



Սիրելի հաւատացեալներ,
Անոնք որոնք կը փափաքին, որ Հոգեւոր հովիւը
այցելութիւն կատարէ իրենց
հիւանդ ընտանեկան պարագաներուն կամ
հարագատներուն

Կրնան կապ հաստատել՝ Տէր Հօր հետ հեռաձայնելով՝
(514) 448-2809 կամ Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Dear Parishioners,
If you have family members or relatives that you wish to have
spiritual support

Please feel free to contact Fr. David Margaryan directly
at (514) 448-2809 or call the secretariat at (514) 279-3066

ՏՆՕՐՅՆԵՔԻ

ԱՄԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՄՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրհնէք փափաքող հաւատացեալները կրնան
Հեռաձայնել

Տ. Դաւիթ Զիւյ. Մարգարեանին՝ (514) 448-2809
կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.



At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing. To request a Home Blessing, please contact with Fr. David Margaryan at (514) 448- 2809 or church office at (514) 279-3066.



ԽՈՐՀՈՒՐԴ ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Այն հաւատացեալները, որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՅԱՆԳԻՍՍ կը խնդրեն, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն զատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

CONSEIL POUR LES MESSES DE REQUIEM

Nous informons les personnes qui désirent faire un REQUIEM à l'intention de leur chers disparus, qu'elles doivent être présentes à l'église dès le début de la Sainte Messe puisque le père évoque le nom des défunts dans ses prières cachées pendant la Sainte Messe. Il est même préférable de donner le nom des défunts la veille en prévenant l'Église ou en contactant le Père.

ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԱՂԹՔ

Քրիստոս Աստուծոյ որդին, որ անխակալ եւ բարեգութ ես,
քու արարչական սիրովդ գթա
հանգուցեալ ծառաներուդ հոգիներուն:

Յիշէ զանոնք արքայութեանդ գալստեան մեծ օրը:
Արժանի ըրէ ողորմութեան, քաւութեան
եւ մեղքերու թողութեան:

Չանոնք սուրբերուդ աջակողմը դասելով պայծառացուր :
Որովհետեւ դուն ես ամենուն Տէրն ու արարիչը.
ողջերուն եւ մեռելներուն դատաւորը:

Եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնը եւ պատիւը.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեան, ամէն:

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

ԿԻՐԱԿԻ, 17 Փետրուար 2019

S. եւ Տիկ. Գեղամ եւ Շուշան Մարտիրոսեանի, Խնդրանքով հոգե-
հանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց մօր՝

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՐԱՏԵԱՆԻ (TAMARA MOURADIAN)

Մահուան 5-րդ տարելիցին առիթով
ինչպէս նաեւ՝

**ԵՂԻՇ ՍՈՒՐԱՏԵԱՆԻ (YEGHISH MOURADIAN), ՎԱՀՐԻՃ
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ (VAHIRJ MARIROSSIAN), ԵՓՐԱՔՍԻԱ
ՋԱՏԻԿԵԱՆԻ (YEPRAKSIA ZADIKIAN), ԱՆԱՀԻՏ ՍԱՀԱԿԵԱՆԻ
(ANAHID SAHAKIAN), ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՄՈՆԵԱՆԻ
(HAROUTYOUN SIMONIAN), ՎԱՂԱՐՇԱԿ ԱՐԹԻՆԵԱՆԻ
(VAGHARSHAG ARTINIAN), ՆՈՒԱՐԴ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ
(NEVART DER KHATCHADOURIAN)**

Հոգիներուն ի հանգիստ
Ինչպէս նաեւ՝

**ՍՈՒՐԱՏԵԱՆ, ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, ՋԱՏԻԿԵԱՆ, ՍԱՀԱԿԵԱՆ,
ՄԻՄՈՆԵԱՆ, ԱՐԹԻՆԵԱՆ ԵՒ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**
Գերդաստաններու համայն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Donations of January 2019

have been received with great appreciation

CHURCH: Mrs. Arpi Gould \$50

**IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:
THE LATE MARO MANAVIAN:**

**Mr. Hagop Evrensel \$500, Mr. Antranig Berberian \$400, Mr. &
Mrs. Dikran & Lina Markarian & Family, Mrs. Chake Berberian,
Mr. Berge Berberian \$200, Mrs. Hermine Berberian, Mr. Harout
Joulian, Mr. & Mrs. Garo & Georgette Nichanian, Mr. Arthur
Hanenian \$100, Dr. Arto Demirjian, Mrs. Seta Tabakian, Mr.
Varoujan Seropian \$50**

HOKEHANKISD:

THE LATE MAKRUHI & MIHRAN OZTURSUCIYAN:

Mr. & Mrs. Berc & Ani Emirze \$75

TZNOUNT YOUGHAKIN:

Mrs. Najda Bosnakyan \$30

**«ՈՂՋՈՅՆ»-Ի ԲԱՆԱԶԵԻԵՐ
SALUT DE PAIX**

Յարգելի հաւատացեալներ,
Սուրբ Պատարագի ընթացքին «Սուրբ Ողջոյն» կը
փոխանակենք:

Այդ առթիւ, «Ողջոյն» տուողը պէտք է ըսէ.-
Pendant la Sainte Liturgie, on échange le baiser de la paix.

Celui qui salue dit:

1) Յունուարի 5-էն մինչեւ 13-ը:

Du 5 au 13 Janvier

Ծնունդի ութ օրերուն.-

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ est né et s'est révéle»

2) Զատիկէն մինչեւ Համբարձում.-

À partir de Pâques jusqu'à l'Ascension.-

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ»

«Le Christ est ressuscité d'entre les morts»

3) Միւս օրերուն.-

Les autres jours.-

«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ s'est révéle parmi nous»

«Ողջոյն» ստացողը պէտք է պատասխանէ .-

Celui qui reçoit le salut réponds:

1- Ծնունդի ութ օրերուն.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Naissance du Christ»

2- Զատիկէն մինչեւ Համբարձում.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Résurrection du Christ»

3- Միւս օրերուն.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Révélation du Christ»



ՆԻՍՏ ՈՒ ԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԶ

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հըրաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձեանան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պետք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ: Եկեղեցին ա-դօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՌՈՒԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պետք է տիրէ:

OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

- 1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
- 2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
- 3) Chaque fois que nous entrons dans l'Eglise pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
- 4) Il est rappelé que l'Eglise est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.

Website: www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,
Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի,
թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ
Կայքէջը - Website www.saintgregory.ca
Ուր կարելի է գտնել Եկեղեցւոյ յայտարարութիւնները
եւ ձեռնարկները:

Կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները
եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն
համացանցային դրութեամբ:
Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Chers Paroissiens,
Nous avons le plaisir de vous informer
de la récente mise à jour de notre
Site: www.saintgregory.ca
Ou vous trouvez les dernières nouvelles des activités
et des événements.
Nous remercions de votre soutien!

Dear Parishioners,
We are glad to inform you our Church's newly developed
Website: www.saintgregory.ca
where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations
and benefiting from other possibilities of our Website.
Thank you for your support!

Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:

Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծիական Խորհուրդ

Attention to our beloved parishioners


If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



**Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

**SOL
ՄՐԲՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ ՉՕՐԱՎԱՐԱՅՆ**
(Սկաուտներու Օրհնութեան Օր)



**Հանդիսաւոր Ս. Պատարագ
Եւ Տօնակատարութիւն**

Նախագահութեամբ՝ Թեմիս Բարեշան Առաջնորդ
Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ
Արժ. Տ. Դաւիթ Քինյ, Մարգարեան

Հինգշաբթի, 28 Փետրուար 2019, Երեկոյեան ժամը 7-ին
Յաւարտ Ս. Պատարագի հիւրասիրութիւն <<Վաչէ Յովսէփեան>> սրահին մեջ
Սիրով կը հրավիրենք հաւատացեալ ժողովուրդը միասնաբար ոգեկոչելու Սրբոց
Վարդանանց Նահատակներու յիշատակն ու ամանորոյթը:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com



Ս. Գրիգոր Լուսավորչի
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի
կ'ունենան

Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1:30-ին:

Les répétitions de la chorale des Jeunes ont lieu
Les dimanches à 13:30 heures

Յաւելլելալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու
հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront
l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le
solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի
բաղկանայ ժամանակակից, դասական եւ
կրօնական երաժշտական կտորներէ,
Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales
contemporaines, classiques et religieuses, de langue française et
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/

Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՁՐՈՅՑ
Տ. ԴԱԼԻԹ ԶԻՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ**



**Ձեր ուշադրութեան կը փափաքինք յանձնել,
թէ յառաջիկայ շաբաթ բացառաբար Հինգշաբթի
օրուան փոխարէն մեր Հոգեւոր Ձրոյցը
տեղի պիտի ունենայ
Ուրբաթ, 22 Փետրուար 2019-ին,
Թեքեան Սշակութային Կեդրոնին մէջ
երեկոյեան՝ (ընթրիքէն ետք) ժամը 9:00-ին:
825 Manoogian St, Saint-Laurent, QC H4N 1Z5**

Նիւթ՝

Աստղագուշակութիւնը եւ Ս. Գիրքը
Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից
ըլլալու
Տ. Դալիթ Զինյ. Մարգարեանի՝ ներկայացուցած
Աստուածաշնչական կիւթերուն:

**Études bibliques et discussions
avec le R.P David Margaryan**

**Nous désirons vous informer que les sessions des
"Études Bibliques" par le R.P. David Margaryan qui
ont lieu les jeudis, la semaine prochaine auront
exceptionnellement lieu
le vendredi 22 février 2019 à 21:00 heures
après le diner**

**au Centre Culturel Tekeyan
825 Manoogian St, Saint-Laurent, QC H4N 1Z5**

**Le sujet de la soirée sera
"l'Astrologie et la Bible"**

**Nous invitons nos chers et chères Fidèles à participer à
cette séance d'interprétation biblique**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

École de dimanche Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Զինյ. Մարգարեան



École de dimanche
Pour les enfants de 6 à 14 ans
Dans une ambiance chaleureuse et amicale on
Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

Chaque dimanche à 11 heures

Pour plus amples informations et inscription

Contactez le secrétariat de l'Église (514) 279-3066

Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Հայց. Առաքելական|
Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

Դաշնակի Դասընթացներ

Փոքրերու եւ չափասերու համար
Սկզբնակներու եւ երաժշտութեան հետեւողներու համար
Անհատական դասընթացներ պիտի կատարուին՝
Ամեն Կիրակի ժամը 11-էն սկսեալ ,
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝

ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ հետ:

Շրջանաւարտ երաժշտագետ McGill համալսարանէն
եւ արժանացած Քեպեքի Ոսկեայ Մետալին
երաժշտական ծիրէն ներս:

Յաւելլեալ մանրամասնութիւններու համար
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

Piano lessons with a concert pianist

All ages – Children / Adults
For beginners & Music trainees
Individual courses will be held every Sunday at 11:00 am

Many years of experience
Theory & harmony
Preparation for Examen and competitions.
Master of Music in Performance from Mc Gill University
Quebec Gold Medalist

For further information
contact to the church office
at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
or Teacher- Zinaida Varosian
at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ



TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY



MAY 7, 2019



MAY 20, 2019



The Women's Guild Central Council,
with the blessings of
H.G. Bishop Abgar Hovakimyan,
Primate of the Armenian Diocese of Canada,
organizes a



TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY



(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes,
Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).



Cost \$2,200 USD (double occupancy)
\$2,600 USD (single occupancy)



Included: 13 nights accommodation at nice
hotels, Breakfasts & dinners,
professional guides (Armenian & English),
Bosphorus by boat,
transportation with high end buses,
domestic flight.



Not included: international airfare, lunches,
drinks, balloon tour in Cappadocia.



Places are limited !
Deposit \$500 by March 7.
Full payment by March 31.



For details, please contact the Diocese at (514) 276-9479 or contact@armenianchurch.ca, or
WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or anita-ot@hotmail.com, or
Mrs. Ayda Afarian at (416) 885-0303 or aydaafarian@gmail.com





Association Médicale Arménienne du Québec
Armenian Medical Association of Quebec
Քեպէզի Հայ Բժշկական Ընկերակցութիւն

Thursday February 21st, 2019 7:30p.m.

Are you interested to get into a
MEDICAL PROFESSION ?

Come join us for an
INFORMATION SESSION!

Guest Speakers:

Palig Balian **MEDICINE**

Anyk Plaisance **DENTISTRY**

Sevag Babikian **PHARMACY**

Maria Tanielian **NUTRITION**

**Armenian Community Center
room #3**

3401 Olivar-Asselin, Montreal, QC H4J 1R7




ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Address : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2